ՀԱՅՆ Ի ԳԵՐՈՒԹԵԱՆ·

— «Այլ համբերից ես անձանձիր
Եւ զայս միայն խորհեցայց·
— «Ո՞ր յարիցէ Տէր վրէժխնդիր
Ազգին և ինձ առնել այց» :

Դու ի վանդակ, ես ի կապանս
Առա գերեցաք մեք, թռչնակ,
Դու սրդալիր քոյդ հըլւառ կեանս,
Ես՝ հայրենեացս ըղձիձակ:
Եւ երկոքեանս յոյժ տարփացեալ
Յազատութիւն և ի սէր՝
Յանգ զայսօրիկ ի սիրտ յուզեալ
Մեք ողբայաք զօր գիշեր:
Ո՞հ, դու թռուեար . . . յազատութեան
Արդ սըլանաս երկնաձեմ.
Իսկ ի բանտի ես հէգ միայն
Կապեալ ձեռամբ զուր հեծեմ:
Թռչնակ սիրոյ, դու յանտառին
Գեղգեղեսցես քոյդ դաշնակ.
Արձակեցից ես թախծագին
Թառաչս երգոց փոխանակ:
Անդ շինեսցես ըզբոյն փափկիկ,
Ձագուցդ ընդ տես բերկրեսցիս.
Աստ ես գնիցեմ անաշխարհիկ
Լըքեալ ըզտուն, սիրելիս:
Ո՛րթ արդ ողջամբ և վայելեա
Յերջանկութեանդ, զոր գըտեր,
Մի՛ մոռասցիս, և զիս երգեա,
Զայն որ ցաւոցդ էր ընկեր:
Այլ համբերից ես անձանձիր
Եւ զայս միայն խորհեցայց·
— «Ո՞ր յարիցէ Տէր վրէժխնդիր
Ազգին և ինձ առնել այց» . . . .

ՍՏԵՓԱՆՈՍ ՄԱԼԽԱՍԵԱՆՑ.

ԱԶԳԱՅԻՆ

Ի ՎԻԷՆՆԱՅԷ·

Վիէննայի Հայեր· — Եկեղեցւոյ խնդիր· — Հայերէն գրքեր եւ գիտնական Պ. Միլլէր Հայագէտ. — Մխիթարեան վանք:

Նախընթաց նամակներիցս մէկի մէջ ասած էի որ՝ չկայ Արեւմտեան Եւրոպայում փոքր ի շատէ նշանաւոր քաղաք, ուր չլինէին Հայերը կամ չլինէր որ եւ իցէ յիշատակ Հայոց ազգի մասին: Այդպիսի քաղաքներից մէկն է եւ Աւստրիայի մայրաքաղաք Վիէննա: Հայոց վաճառականները արդէն վաղուց շարունակում են իւրեանց առեւտրական յարաբերութիւնները սորա հետ, Հայոց երիտասարդները վաղուց սկսել են բարձրագոյն գիտութիւններ ուսանել սորա Համալսարանի մէջ,

Վիէննայի մէջ կան երկու տեսակ Հայեր՝ մշտաբնակ եւ ժամանակաւոր· առաջինքը այժմ հազիւ 25—30 հոգի են, բայց ներկայ պատերազմից առաջ աւելի շատ են եղած· սոքա ըստ մեծի մասին երիտասարդ կամ չամուսնացած մարդիկ են, բայց կան եւ երեք — չորս ընտանիք, որոց կէսը տարաբախտաբար Գերմանացուհիք են: Այս մշտաբնակ Հայերը ունին կանոնաւոր գրասենեակներ (բիրօ) եւ ընդարձակ առուտուր են վարում· մեծագոյն մասը ապրանք է ուղարկում Տաճկաստան եւ այն տեղից ստանում է հում մթերքներ· իսկ փոքրագոյն մասը յարաբերութիւն ունի Ռուսաստանի հետ, մանաւանդ Թիֆլի-